ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՄԱՅԻԼՆԵՐԸ

ԱՍՏՂԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Կրակի հետ առնչվող պահպանակները կապված են արևի, լույսի, ջերմության, խարույկի, ծխի, մրի, ածուխի, մոխրի, մոմի, ճրագի, շիկացած մետաղի հետ: Կրակի պաշտամունքն արտահայտվում է երդումներում, մոգարգելներում, ավանդություններում, ծիսական արարողություններում, գուշակություններում և այլն:

Երդվում *են ճրագի, թոնրի, օջախի կրակի վրա՝ «իդա ճրագի սերսուբ (սուրբ) լուս գինա»*[1], *«էսա թորվան բյարաքեթ, որ Աստծու տաճարն ի»*[2], *«քու օջախը վկա», «քու տան կրակը վկա»*[3]*: Դեռ այսօր էլ երդվում են՝ «հորս արև», «մորս արև» և այլն:*

Արգելվում է *կրակի վրա ջուր ածելը, ծեծելը, կոխոտելը, վրայով անցնելը, մեջը թքելը, միզելը: Հաց թխելիս կանայք իրենց բերանը կապում էին, որպեսզի թքի կաթիլներ չցայտեին կրակի վրա*[4]*: Ստ. Լիսիցյանը նշում է, որ Արևելյան Հայաստանում կանայք ամուսնանալուց հետո կրակը չպղծելու նկատառումով ծածկում էին իրենց բերանը, և դա զրադաշտականության ազդեցության հետևանք էր*[5]*:*

Արգելքներից էին՝ 1. եփվող կաթի կաթսայի տակից կրակ վերցնելը, 2. քառասուն օր տնից կրակ հանելը, երբ հորթ էր ծնվում, 3. ցանքսի շրջանում կրակը տնից դուրս հանելը (ցանածը չէր աճի), 4. գիշերը կրակը դուրս բերելը (տան բարաքյաթն *էլ հետը կգնար կամ տնեցիներից մեկը կմահանար)*[6]*, 5. կրակ վառելն այն սենյակում, ուր հանգուցյալ կար: Դիալվացման ջուրը տաքացնելու համար տան օջախի կրակը չէին օգտագործում, որպեսզի չպղծվեր. կայծքարով ու պողպատով նոր կրակ էին անում բաց երկնքի տակ: Ջուրը տաքացնելուց հետո այդ կրակը պիղծ էր ու վնասակար: Կիսայրված փայտի կտորները բակում չէին թողնում, դրանք տակավին այրվող՝ փողոց էին նետում: Անցորդները հավատում էին, որ եթե դրանք կոխոտեին, ընտանիքի անդամներից մեկը կմահանար*[7]*:*

---

[1] *Բ ե ն ս ե . Բուլանիխ կամ Հարք գավառ.– «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 34:*

[2] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական.– ԱՀ, գ. XXV, Թիֆլիս, 1914, էջ 52:*

[3] *Վ. Պ ե տ ռ ո յ ա ն. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 334:*

[4] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 51:*

[5] *Հայաստանի պատմության թանգարան, Ստ. Լիսիցյանի նյութեր, № 120, I, 1934 , էջ 190:*

[6] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք.– ԱՀ, գ. Ա, Շուշի, 1896, էջ 361:*

[7] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 62:*

Կրակը չի կարելի հանգցնել փչելով և ջրով՝ մեղք է: Նախ՝ կրակը հանգցնելիս ասում են՝ «կրակն օրհնել», և պետք է հանգցնել՝ վրան մոխիր լցնելով: Ցերեկով ճրագը փչելով մարելն էլ է մեղք, հանգցնում են ձեռքով օդի հոսանք առաջացնելով՝ «թե չէ տան ճրագն էլ կմարի»[8]:

Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ խեթական տաճարների սպասավորներն էլ էին հետևում կրակ հանգցնելու կանոններին: Անչափ կարևոր էր կրակն անմար պահելը: Խաթթուսաս մայրաքաղաքի ճակատագիրը կախված էր կրակն անշեջ պահելուց: Կրակն անմար պահել՝ նշանակում էր պահպանել երկրի բարօրությունը: Շմարող կրակը կապվում էր տոհմային ու պետական ավանդույթների պահպանման հետ: Թագավորը կարգադրում էր՝ «Երբ դուք պահպանեք իմ խոսքը, այնժամ դուք իմ երկիրը կդարձնեք խաղաղ, կրակարանում կպահպանեք կրակը… Երբ դուք օջախում կրակը չպահպանեք, այն ժամանակ կգա օձը և Խաթթուսաս քաղաքը կպատի իր օղակներով»: Ազգաբանական զուգահեռների հիման վրա կարելի է ասել, որ շատ ժողովուրդների պատկերացումներում է ցեղի բարեկեցությունը կապվում կրակի պահպանման հետ, որը հասարակական կարևոր պարտականություն է[9]: Օջախի կրակը պահպանելը սրբազան պարտք և ընտանիքի հարատևության խորհրդանիշ է նաև հայոց հավատալիքներում: Սերունդների անընդհատության օրհնանքում ասվում է՝ «Օճախիտ մուխն ու ծուխը անպակաս ըլնի»[10]: Կրակն օրեցօր պահպանելու համար, գիշերը մարմրող ածուխների մեջ դանդաղ այրվող կոճղ էին թաղում: Հարևաններից կրակ խնդրելը անփութություն էր համարվում, իսկ օջախը վառ պահող տանտիկինները հարգանքի էին արժանանում[11]:

Կրակը զոհաբերվում *է սրբերին և աստվածներին (հմմտ. Ե. Չարենցի «Ողջակիզվող կրակ»-ը, որտեղ ողջակիզումը ոչ թե կրակի միջոցով է կատարվում, այլ ինքը՝ կրակն է ողջակեզը): Սրա վկայություններից են հնագույն տաճարները, սրբատեղիները, թաղման ծեսերը: Զոհաբերման սովորույթը պահպանվել է ցայսօր. Թալինում գարնանն առաջին անգամ հարած յուղով նախ ճրագ են վառում* որպես մատաղ, *հետո յուղն օգտագործում: Եթե երեխան հիվանդանում է, խոստանում են՝ «Աստվա՛ծ, երեխան որ լավանա, ճրագ կվառեմ», ինչպես մոմ վառելը կամ կենդանական զոհ մատուցելը: Ճրագ են վառում նաև կիրակնամուտին[12]: Գեղարքունիքում սրբատեղիներում ձեթով ճրագաման են մատուցում սրբերին[13]: Ճրագի լույսը հալածում է դևերին, բարիք, լիություն է բերում՝ «Ճրագն ընկավ, լիացավ / Դևն ու դևան հալածեցավ»[14]:*

---

[8] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 50:*

[9] В. В. И в а н о в. Культ огня у хеттов.– “Древний мир”, Сборник статей, М., 1962, с. 268.

[10] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 254:*

[11] *Վ. Պ ե տ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 334:*

[12] *Ա. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Թալին, 1977, էջ 53, 56:*

[13] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 30:*

[14] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ. , էջ 38:*

Տոների *ժամանակ կրակի պաշտամունքն առանձնապես վառ է արտահայտվում: Մ. Օրմանյանը գրում է. «Հնում բոլոր մեծ տոների նախօրյակին երեկոները սովորություն է եղել ճրագ վառել և «Լոյս Զուարթ» երգը «Օրհնութիւն ճրագաց» կոչված է... այժմ «ճրագլոյց»-ը միայն Ծննդյան և Զատկի նախընթաց երեկոների արարողության անվանումն է, երբ բոլորի ձեռքը մոմեր պետք է լինեն, ինչպես նաև այդ տոներին նախորդող ամբողջ օրերը որպես մեծ տոնի պատրաստության օր»*[15]*: Հնում տարեմուտի գիշերը մեծ գերան էին դնում գլխատան կրակարանում, որպեսզի մինչև Քրիստոսի Ծննդյան օրն անընդհատ վառվեր: Իսկ հետո՝ բերքի առատության համար դրա խանձողները թաղում էին արտերում*[16]*:*

Չար ոգիներին ոչնչացնելու համար զրադաշտականները նոր տարին դիմավորելիս սեղանի յուրաքանչյուր սպասքի մոտ մեկ մոմ են դնում որպես սուրբ կրակի խորհրդանիշ: Եվ քանի որ կրակը մաքրագործման, ամենայն աղտեղության ոչնչացնողն է, փողոցներում խարույկներ են վառում և երիտասարդները դրանց վրայով թռչում են՝ մաքրվելով ապականությունից և անմաքրությունից[17]*: Սրան նման է Նոր Նախիջևանի հայերի հետևյալ սովորույթը. «Ծննդյան ճրագլույցի ժամերգությանը... կանգնում են վառած մոմերով... մինչև պատարագը... վերադառնում են տուն, բերելով նույնքան մոմ, որքան տանն անդամ կա, վառում ամեն մի սպասի առաջ և վառած մոմերով ընթրում»: Իսկ Նոր տարուն կրակով, ծխով ոչնչացնում էին աշխուժացած* շվոտներին *ու* խոնջոլոզներին*[18]*: Հայերն ու վրացիները գյուղերում և քաղաքներում չար ոգիներից ունեցվածքը պաշտպանելու համար ամեն շաբաթ երեկո մոմեր էին վառում՝ առևտրականները՝ խանութներում, արհեստանոցներում, վաճառասեղաններին, այնտեղ, որտեղ ստացված գումարն էր պահվում, կշեռքների, մրգերի փայտե թասերի վրա: Արհեստավորները գործիքների վրա էին մոմերը վառում՝ հյուսները՝ հաստոցի, դարբինը՝ զնդանի, կոշկակարն՝ իր սեղանիկի վրա*[19]*:*

Սբ. Ծննդյան օրը՝ Զրօրհնեքին յոթ դռնից չոփ են գողանում, խնոցու տակ վառում, որպեսզի յուղն առատ լինի[20]*:*

Կրակի հմայական ուժն առանձնակի կարևորություն ունի Տեառնընդառաջի տոնին: Խ. Սամուելյանը գրում է, որ երկրագործներն ու անասնապահները կրակի պաշտամունքի հետ կապված մոգական միջոցներով ապահովում էին ցանքսերն ու բերքի առատությունը: Այդ նպատակով հնագույն ժողովրդական հավատալիքները սահմանել են հասարակական տոներ՝ նվիրված կրակի պաշտամունքին, որ կատարվում էին կրակներ ու խարույկներ վառելով: Այդպիսի տոնի մնացորդ է ժողովրդական «տրնդեզը», որ քրիստոնյա հայ եկեղեցին

---

[15] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 28:*

[16] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ.– ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 250:*

[17] Е. А. Д о р о ш е н к о. Зороастрийцы в Иране, М., 1982, с. 72–73

[18] *Ե. Շ ա հ ա զ ի զ. Նոր-Նախիջևանը և Ն. Նախիջևանցիք. Ծեսեր և սովորություններ.– ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 9, 18:*

[19] Г. Ф. Ч у р с и н. Народные обычаи и верования Кахетии. Тифлис, 1905, с. 37.

[20] *ԴԱՆ, Արցախ, 1974, էջ 22:*

միացրել և ձուլել է իր սահմանած «Տեառնընդառաջ» տոնի հետ[21]*, մինչդեռ հնում եկեղեցին դատապարտում էր կրակի պաշտամունքը՝ «խոտելի է շրջել զիրով»: Այնուհանդերձ, ժողովուրդը շարունակում է հզոր ուժ վերագրել Տեառնընդառաջի խարույկին, նրանից վառած մոմերին, խանձողներին, մոխրին: Ըստ Լոռիում գրանցած ավանդության, կրակի հմայության արխաիկ տարրերը պահպանվել են ցայսօր՝ «Տեառնընդառաջի կրակից տաքությունն ավելանում է, հողը շունչ է առնում և արևի ճառագայթները հողի մեջ են թափանցում»*[22]*: Այս տոնը հայերն ամենուրեք նման ձևով էին կատարում: Ջուղայում, օրինակ, խարույկները պատրաստում էին նոր ամուսնացած երիտասարդները… փշերը դիզում էին եկեղեցու գավթում, մոմերը ձեռքներին պահած՝ շարքով կանգնում առջևը: Քահանան կարգը կատարելով, իր մոմով վառում էր դեզը, նրանից հետո նորապսակներն էին վառում: Այնուհետև երիտասարդները վառած մոմերով վերադառնում էին տուն, և կտուրի վրա նախօրոք պատրաստված փոքրիկ դեզն այդ մոմերով վառում: Վարանդայում նշանված երիտասարդները ցրդի (զիհի) ճյուղերով էին խարույկ սարքում գավթում և վառում էին եկեղեցու ջահից կպցրած մոմով: Այս խարույկից մի կրակ էին գցում տան մեջ՝ անպայման երդիկից, որով վառում էին այդ երեկոյի մոմը, որպեսզի բախտը տան վրա լիներ*[23]*: Երդիկից ներս թափվող մոխիրն ապահովում է յուղի ու պանրի առատությունը*[24]*, հավաբունը լցնելիս՝ հավկիթների քանակը և հաջող թուխս նստելը*[25]*, թոնրի ակը լցնելիս ասում են՝ «որ բարություն լինի ական մեջ» ու նաև նավթի ճրագ են դնում թոնրի ակը*[26]*: Կանայք Տեառնընդառաջի կրակից վառած ճրագով այրում էին հավերի փետուրների ծայրերը՝ կրկին բարեհաջող թուխս նստեցնելու համար*[27]*:*

Նորահարսերին և նորածին երեխաներին երեք անգամ պտտեցնում էին խարույկի շուրջը[28]*: Սովորաբար կրակի վրայով անցնելը մեղք է, մինչդեռ* տրնդեզի *կրակի վրայով թռչելը պարտադիր է նրանց համար, ովքեր պետք է ամուսնանան և նրանց՝ որ զավակ են ունենալու: Անգամ սպասվող երեխայի սեռն էին կապում կրակի հետ՝ նորահարսերը կրակի վրայով թռչում էին, որպեսզի առաջին երեխան տղա լիներ*[29]*: Կրակի վրայով թռչելու դրդապատճառներից մեկը հրի չարահալած ուժն է: Այսպես, հարսը քավորկնոջ ձեռքից բռնած յոթ անգամ պտտվում է կրակի շուրջը և ամեն պտույտին մեկ անգամ թռչում վրայով, որպեսզի չարքերը վառվեն*[30]*: Բայց առաջնայինը, անկասկած, կրակի բոցից բեղմնավորվելու գաղափարն էր:*

---

[21] *Խ. Ս ա մ ո ւ է լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, երևան, 1931, էջ 302:*
[22] *ԴԱՆ, Լոռի, 1972, էջ 155:*
[23] *Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. Հայկական սովորություններ.– ԱՀ, գ. VII–VIII, Թիֆլիս, 1901, էջ 121–122:*
[24] *ԴԱՆ, Մաստարա, 1981, էջ 6:*
[25] *ԴԱՆ, Քեթի, Ախուրյանի շրջ., 1974, էջ 1:*
[26] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 41:*
[27] *Բ ե ն ս ե. նշվ. աշխ., էջ 59: ԴԱՆ, Զոլաքար, Մարտունու շրջ., 1973, էջ 19:*
[28] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վարանդա.– ԱՀ, գ. Բ, № 1, Թիֆլիս, 1897, էջ 217:*
[29] *ԴԱՆ, Լոռի, 1972, էջ 155:*
[30] *Վ ա ր դ ե ն ի Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. ԴԱՆ, Գեղարքունիք, 1986, էջ 3:*

Որպես հմայական պահպանակ, տրնդեզի *մոխիրը խաչաձև քսում են նախ հարսի, ապա և տոնի մյուս մասնակիցների ճակատներին, լցնում են կտորի մեջ, կապում են և կախում դռան գլխին*[31]*: Ընդհանրապես, մոխիրը խլխլում էին, քսում միմյանց երեսին, ձյան հետ խառնում ուտում էին, երդիկներից ներս լցնում, որպեսզի չարը խափանվեր, տունը՝ լիառատ լիներ*[32]*: Մոխիրը լցնում են կտուրի չորս անկյուններում, որպեսզի «խեր ու բարաքյաթ լինի, ցավն ու չոռը հեռանան»*[33]*, նաև՝ հարստանան*[34]*: Ածուխով մառանի և տան երդիկների շուրջը կլոր գծում էին, որպեսզի չար աչք չկպչեր մառանի պաշարին և առհասարակ ողջ ունեցվածքին: Այս տոնի մոմերը նույնպես հմայիլ էին դառնում. Տեառնընդառաջի երեկոյան ժամերգությանը կանայք մոմ էին վառում, վերջում հանգցնում էին և տուն տանում, մոմերի մասնիկները արդուկով հալեցնելով ներսից ամրացնում էին երեխաների գլխարկներին, որպեսզի հատկապես այդ գիշեր եկող* ֆըշոտ *կոչվող դևերը չվնասեին մանկանց*[35] *:*

Տղամարդիկ, ինչպես Նոր տարվա, այնպես էլ այս տոնի խարույկի խանձողներն ու մոխիրն էին տանում արտերը, որպեսզի ապահովեին տարվա առատ բերքը[36]*: Սասունում պատանիները կիսավառ փայտերը գցում էին բոլոր ուղղություններով, տալով իրենց արտերի անունները և բերքառատություն մաղթում՝ «բարաքեն վերին արտին, ցորենը շատ լինի», «բարաքեն տան դռան գլգլի արտին, հասկերը մեծ լինեն»: Առկայծող կրակներ էին նետում գոմի վրա՝ եզներին ուժ ցանկանում, իսկ կովերին մաղթում, որ նրանց կաթը «ջրվեժ լինի»*[37]*: Տեառնընդառաջի կրակը պաշտպանում էր նաև վայրի կենդանիներից, և կրակի վրայով ցատկելիս այրում էին հուճիկի կապը (շապիկի թևքի), որպեսզի գայլերը չմոտենային*[38]*: Փոքր աղջիկներն ու տղաները հատուկ այդ օրվա ծիսակատարության առիթով գործված գուլպաներ ու արախչիներ էին «ձգում կրակը, որպեսզի շնորհք ստանային»*[39]*:*

Զիպի տոնին (պառավի քամու 7 օրերին՝ փետրվարի վերջին 3 և մարտի սկզբի 4 օրերին) ու Նավասարդին սասունցիները ոչ՛ կրակ, ոչ՛ մոխիր չէին հանում տնից դուրս[40]*:*

Չարչարանաց շաբաթվա չորեքշաբթի օրը, երբ չար ոգիներն առանձնակի աշխուժությամբ իրարանցման մեջ էին ընկնում ու հարձակվում բոլորի և ամեն ինչի վրա, հայկական ու վրացական գյուղերում կրակի տոն էին կատարում՝ խարույկներ վառելով փախցնում էին չար ոգիներին[41] *անպայման թռչելով կրա-*

---

[31] *Նույն տեղում:*

[32] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 41:*

[33] *ԴԱՆ, Արցախ, 1974, էջ 19:*

[34] *Ա. Ա թ ա յ ա ն. Սալմաստ, Նոր-Ջուղա, 1906, էջ 174:*

[35] *Տ. Պ ա լ յ ա ն. Նախապաշարմունք, գուշակություն, հմայք Կեսարիա և շրջակաները, Բյուրակն, Կ. Պոլիս, 1899, էջ 280:*

[36] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 51:*

[37] *Վ. Պ ե տ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 333:*

[38] *Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան, հ. 3 , Երևան, 1944, էջ 137:*

[39] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք.– ԱՀ, գ. Բ, № 2, Թիֆլիս, 1897, էջ 263:*

[40] *Վ. Պ ե տ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 334:*

[41] Г. Ф. Ч у р с и н, *Նշվ. աշխ., էջ 37:*

կի վրայով, որպեսզի չարքերը չկարողանային թաքնվել հագուստի ծալքերում[42]*: Ինչպես* տրնդեզի, *այնպես էլ Չարչարանաց շաբաթվա մոմերը բարեբեր են. Հինգշաբթի օրը եկեղեցուց բերած մոմերն ամրացնում էին եզների պոզերին ու վառում, քանի որ «հաց աշխատողը եզն ա»*[43]*: Իսկ Զատկին եկեղեցում մոմեր էին մատուցում քավորկինն իր սանամորը, սկեսուրը՝ որդու հարսնացուին: Ճրագներն էլ հիշատակվում են այդ օրը տնետուն գնացող, հավկիթ հավաքող երեխաների երգերում՝ «Ճրագ, ճրագ, ճշմարիտ, / Ճշմախոտիկ մարտիրոս, / Մեր սիրելի Քրիստոս...»*[44]*:*

Համբարձման տոնի չորեքշաբթի օրը կանայք հարևաններից կրակ էին գողանում, որպեսզի կովերի կաթն ավելանար[45]*: Միևնույն նպատակով Մեծ պասին 7 փթիր՝ գաթայի ձևով քակոր են թխում և պահում, որպեսզի Համբարձման օրը վառեն կաթի կաթսայի տակ*[46]*:*

Չար ոգիներից *տունը պաշտպանող հմայիլ էր խանձողը՝ կրակն անթեղ անելիս նրա կոթը դեպի դուռն էին ուղղում, որպեսզի չարքերը ներս չմտնեին*[47]*: Այն հեռացնում էր դժբախտությունը, օրինակ, երբ բուն տան մոտ կռնչում էր, տան անդամներից որևէ մեկի մահն էր գուշակում, և կանխարգելելու համար վրան խանձող էին նետում*[48]*:*

Ժողովրդական պատկերացումներում ինչպես կրակը, այնպես էլ թոնիրն *ու* կրակարանն *են սրբազան: Օջախը տան կենտրոնն է, որտեղ և՛ ծիսական, և՛ տնտեսական տեսանկյունից հումը, յուրացվածը, անմաքուրը դառնում են եփված, յուրացված, մաքուր: Սա այն տեղն է, ուր կրակն է գտնվում և հատկապես նրա հետ են կապված կրակի պաշտամունքին առնչվող կարևորագույն ծեսերը*[49]*: Օջախը՝ որպես սրբության մարմնավորում ընկալելը տարբեր ձևերով է արտահայտվել հայերի պատկերացումներում: Վարանդայում, օրինակ, գրեթե ամեն մի գյուղում մեկ կամ երկու օջախներ կային, որոնք* սրբատեղիներ *էին: Կիրակի և տոն օրերին կանայք ուխտ էին գնում այդ օջախները՝ մոմեր վառում և խունկ էին ծխեցնում*[50]*:*

Բացի բուն կրակի պաշտամունքից, նաև նախնիների պաշտամունքն է կապված թոնրի հետ: Ընտանիքի նախնիները բնակվում են թոնրի շրթի կամ ակի մեջ և նրա՛նց համար էին Տրնդեզին ճրագը դնում ակը: Թոնրին և նախնիներին են զոհաբերում հարսանիքին մորթած եզի արյունը, որը մինչև այժմ էլ քսում են շրթին, «թե չէ թոնիրը հացը կքաշի», ամբողջական դուրս չի գա[51]*:*

---

[42] И. Степанов. Приметы и поверья грузин Телавского уезда Тифлисской губернии.– “Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, вып. XIX, Тифлис, 1894, с. 81.

[43] *ԴԱՆ, Ղափան, 1985, էջ 32:*

[44] *Քաջբերունի. նշվ. աշխ., էջ 128–129:*

[45] *Խ. Սամուելյան. նշվ. աշխ., էջ 303:*

[46] *Ե. Լալայան. Նոր-Բայազետի գավառ.– ԱՀ, գ. XVII, Թիֆլիս, 1908, էջ 110:*

[47] *Խ. Սամուելյան. Հայ ընտանեկան պաշտամունքը.– ԱՀ, 14, Թիֆլիս, 1906, էջ 162:*

[48] Г. Ф. Чурсин. *Նշվ. աշխ., էջ 36:*

[49] В. В. Иванов, В. Н. Топоров. Славянские языковые моделирующие семиотические системы. М., 1965, с. 168.

[50] *Ե. Լալայան. Վարանդա.– ԱՀ, գ. Բ, էջ 115:*

[51] *ԴԱՆ, Լոռի, 1972, էջ 41:*

Նախնիների պաշտամունքի ու թոնրի կապի վկայություններից է ընկած ատամներն ու կտրած եղունգները թոնրի շրթի տակ թաղելը կամ թոնրի ակը նետելը՝ աղոթելով ու վկա բերելով այնտեղ բնակվող ոգիներին՝ «Առ քեզ, ապի՛, շան ատամ, / Տու՛ ինձ օսկե ատամ» և «Ղու՛նգ, դու՛նգ, էտի կաց / Աթա՛մ, դուն վկա կաց»: Նախահայր Ադամը, անշուշտ, այստեղ հանդես է գալիս պապի փոխարեն: Մարդիկ կտրած եղունգները, մազերը, ընկած ատամներն աղոթելով և հատուկ կարգով թաքցնում են սուրբ համարվող տեղերում (եկեղեցու պատի, տան սյան ճեղքում, փույչ ծառի մեջ), քանզի հավատում են, թե հարության ժամանակ մարմնի այդ մասերը նույնպես պետք է հայտնվեն և եթե չթաղվեն, հետագայում ստիպված են լինելու փնտրել դրանք: Եթե հնարավոր չէ եղունգները թաղել, դրանք պետք է ուսերի վրայով ետ գցել և երեք անգամ ասել՝ «Ուր էլ գնամ, ինձ հետ գա՛ս», որպեսզի հետագայում դրանք գան մարմնի հետևից[52]*:*

Օջախի մոտ էին տանում նաև նոր գնած անասունը և ոտներին ջուր ածում, որպեսզի չկորչեր[53]*:*

Թոնրին, որպես սրբազան հովանավորի, ուխտ են անում, որ եթե ամուլ հարսը երեխա ունենա, նախապես շորեր չպատրաստեն և երբ նա հղիանում է, գոգնոցը թոնրի ակն են խրում, երբ երեխան ծնվում է, այդ գոգնոցի մեջ են փաթաթում մինչև որ հարսը վեր է կենում և հարևաններից կտորներ խնդրելով՝ շոր կարում[54]*: Օջախի ու նախնիների կապն արտահայտվում է նաև հետևյալ սովորույթով. երբ ցանկանում են, որ պանդուխտը շուտ վերադառնա, ակի մեջ կանչում են՝ «Աղու՛թ, Զմրու՛թ, այսինչին կանչե՛ գա»*[55]*:*

Կրակը նախնիների հետ կապելը պատահական չէ. տարբեր ժողովուրդների պատկերացումներում մարդու ծագումն իսկ կապվում է կրակի հետ: Հենց դիակիզման և կրակով նվիրագործության ծեսերը, որոնց միջոցով իրականացվում է կապն այս և այն աշխարհների միջև, այսինքն մահը և վերածնունդը, ակնարկում են, որ մարդու ծնունդը ևս պետք է պատկերացվեր կրակի հետ կապված: Նույնիսկ հունարեն anthropos «մարդ» բառը ստուգաբանորեն առնչվում է anthrax «ածուխի» հետ[56]*: Մ. Աբեղյանն այս մասին գրում է. «Երկրի վրա կրակ վառելու, ավելի ճիշտ շփումով երկու փայտից սրբազան կրակ հանելու գործողությունը նախնական հայացքով նմանեցրած է սերելու, ծնելու գործողությանը, և վեդաներում ոչ միայն կրակ հանելն իբրև ծնունդ է նկարագրված, այլ և երկու շփելու փայտերը, որոնք նկարագրվում են իբրև մարդու մարմին, պաշտամունքի մեջ անձնավորված իբրև հայր ու մայր են ըմբռնվում և նոցանից առաջացրած կրակն իբրև որդի»*[57]*: Կրակ ստանալու հատկապես այս եղանակն է, որ տարբեր վայրերում օժտված է առանձնահատուկ զորությամբ: Տեղին է նշել, որ*

---

[52] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 59-60:*

[53] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գաւառ.– ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 247:*

[54] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Նոր-Բայազետի գավառ, էջ 31:*

[55] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 52:*

[56] *Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Թուխ Մանուկ. հնագույն ակունքները.– «Թուխ մանուկնԵրևան, 2001, էջ 34:*

[57] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմության մեջ (արտատպված «Արարատ» ամսագրից), Վաղարշապատ, 1899, էջ 147:*

բինար հակադրությունների շարքում արականը հակադրվում է իգականին որպես չորը՝ թացին, արևը՝ լուսնին, կրակը՝ ջրին: Օջախը՝ հատկապես թոնիրն իգական է, կրակը՝ արական, ինչպես Տրնդեզի կրակն է, որ բեղմնավորում է կանանց[58]: Սակայն ավանդություններում կրակը երբեմն պատկանում է իգական սեռին: Նա աղջիկ է՝ ջուր տղայի քույրը: Բացի այդ, միշտ կինն է եղել կրակը վառողը, սրբազան կրակն անշեջ պահելը նրա պարտականությունն է եղել: Կնոջ մահը համեմատվում է տան կրակը հանգչելու հետ[59]:

Ամուսնության ծիսակարգում *կրակն առանձնահատուկ տեղ է գրավում: Եվ քանի որ մոխիրն ու ճրագը կնոջ խորհրդանիշներն են[60], Զանգեզուրում տղայի համար աղջկա ձեռքը խնդրելիս, նրա մայրն աղջկա մորն ասում է. «Եկել եմ ճրաքիցտ մին ճրաք վառեմ»: Նրա հետ եկած մի այլ կին էլ՝ «Դե, մին հափուռ (բուռ) մոխիր է, հափռում ենք (բռնում ենք): Թե մեր երախի բախտում կա՝ ոսկի է դառնալու, թե չէ, լիա մոխիր է որ մոխիր է»[61]: Վարանդայում ասում էին. «Մունք եկալ ընք մըն հափուռ մոխիր եր օնինք քու օճախետ, տանինք մեր օճախին նհետ խառնինք»[62]: Բուն հարսանիքի ժամանակ միևնույն բովանդակությամբ բարեմաղթության է արժանանում փեսան՝ զոքանչից. «Քու իմ օջախից վեր առած մի բուռը մոխիրը անհատնում ոսկի դառնա քեզ համար»[63]: Հարսանիքի ծեսում առանձնապես լավ են պահպանվել նախնիների, կրակի, օջախի պաշտամունքի տարրերը: Կարելի է սկսել նրանից, որ թոնիրը եկեղեցու դեր էր կատարում պսակադրության ժամանակ՝ 1. երբ գյուղում եկեղեցի չէր լինում, 2. երբ եկեղեցի կար, բայց ննջեցյալ էր այնտեղ լինում, 3. երբ ամուսնացողներն այրի էին, 4. երբ չհաստություն կար, 5. երբ հարսնացուն բարոյական կյանք չէր ունեցել նախկինում:*

Թոնրի պսակը կատարելիս նրա շուրջը մոմեր էին վառում: Հարսն ու թագավորը երեք անգամ պտտվում էին շուրջը և կանգնում թոնրի արևմտյան կողմը, դեմքով դեպի արևելք: Ապա ծնկի էին իջնում և երեք անգամ համբուրում թոնիրը: Այնուհետև քահանան կատարում էր պսակադրությունը և նորապսակները, կրկին համբուրելով թոնիրը, վերադառնում էին, մինչև թոնրատնից դուրս գալը հետ-հետ գնալով՝ որպեսզի մեջքները չդարձնեին դեպի թոնիրը՝ դա մեղք համարելով[64]: Երբ հարսն իր տնից ապագա ամուսնու տուն պետք է գնար, նախ համբուրում էր իրենց տան օջախը, հետո փեսայի տուն մտնելիս՝ նրանց տան օջախը, որով նրանց յուրայինն էր դառնում ու փեսայի տանն էլ 7 անգամ (կամ 3) պտտվում էին օջախի շուրջը[65]: Հարսի տան օջախը համբուրելիս հարսը և փեսան (կամ միայն փեսան) մոխիր են վերցնում ու գալով փեսայի տուն, լցնում

---

[58] *Եգիպտական առասպելներում Արևը իգական սեռ ունի, ինչպես հայոց ասեղների առասպելում:*

[59] *Ա. Ղ լ տ չ յ ա ն. Հին հայ իրավունքը.– ԱՀ, գ. XXIV, Թիֆլիս, 1913, էջ 25:*

[60] *Առածում՝ «Աղջիկը ուրիշի տան ճրագն է»:*

[61] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Զանգեզուր.– ԱՀ, գ. Դ, № 2, Թիֆլիս, 1898, էջ 68:*

[62] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վարանդա, էջ 195:*

[63] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 227:*

[64] *Ե. Լ ա լ ա յ ա ն, Վարանդա, էջ 117:*

[65] *ԴԱՆ, Զոլաքար, Մարտունու շրջ., 1973, էջ 8:*

են օջախը: Երկու տների օջախների մոխիրները խառնելով, ինչպես նշում է Զ. Խառատյանը, երկու օջախների՝ գերդաստանների միջև հաստատվում են ազգակցական կապեր և երկու օջախների սրբերի օրհնությունն են ստանում պսակվողները[66]*: Կրակի ու նախնիների պաշտամունքի ծեսը օջախի պսակադրության ժամանակ ձևափոխվել է ժամանակի ընթացքում և սովետական կարգերի շրջանում նորապսակները զագս-ում ամուսնությունը վավերացնելուն պես միանգամից գնում էին անհայտ զինվորի անշեջ կրակին իրենց հարգանքը մատուցելու, որով եկեղեցին կրկին փոխարինվում է կրակով:*

Հարսանիքի ժամանակ, նախքան հարսի ու փեսայի տուն մտնելը, փեսայի մայրը 2 կամ 4 հացերի վրա դրված ափսեով խունկ է պտտեցնում թոնրի (օջախի) շուրջը, ապա տան անկյուններում, որտեղ բնակվում են ոգիները, հետո տնից դուրս է գալիս և բակում պտտվում հարսի ու փեսայի շուրջը: Տուն մտնելիս հարսը երեք պտույտ է գործում թոնրի շուրջը, հետո հարսն ու փեսան ծնկի են իջնում, համբուրում օջախի շուրթը, և հարսը օջախն է նետում հոր տնից բերած խունկը՝ որպես զոհաբերություն[67]*: Մեծահասակ կանայք խնկամանը հարսի ու փեսայի գլխավերևը պտտեցնելով՝ բարեմաղթություններ են ասում*[68]*: Այդ ժամանակ կարևոր են և մոմերը: Փեսացուին սափրելու ծեսի ժամանակ* ազապ պաշին *մի մեծ մոմ ձեռքին կանգնում էր թագավորի աջ կողմում, իսկ նրա օգնականը՝ մոմով՝ ձախում: Հանդերձները հագցնելիս կնքահոր կողմից եկած երկու երեխա՝ թրի մոմերը ձեռքներին կանգնում էին նրա երկու կողմում*[69]*: Ռոդոսթոյում հարսանյաց ծեսի շաբաթ օրը փեսայի տնից հարսնացուին զգեստները տանելիս, կնքահայրը ծրարով մոմ էր ուղարկում*[70]*: Երբ հարսն ու փեսան եկեղեցուց տուն էին գալիս, փեսայի մայրը գլխին դրած կամ ձեռքին բռնած քաղցրեղեններով ու մոմերով ափսեով պարելով ընդառաջ էր գնում, համբուրում էր նրանց և առաջնորդում հարսի սենյակը*[71]*: Մոմերով էր զարդարվում նաև հարսանեկան* լույսը*: Սա մի սկուտեղ է՝ շուրջը շարված խնձորներով, նրանց վրա ամրացված մոմերով, մեջտեղում քաղցրավենիք, հավ, ձու և այլն: Աղջկա տանը նրա ազգականները* լույսը *բերում են այն ժամանակ, երբ գալիս են թագավորն ու քավորը: Իսկ փեսայի տանը* լույսը *նրա ազգականներն են բերում:* Լույսը *հայերենում շատ հաճախ է օգտագործվում* ուրախություն *իմաստով: Պատահական չէ, որ հարսանյաց ծեսի երեկոյան ներս մտնողներն ասում են* բարի լույս*: Պետք է այստեղ հիշատակել նաև* աչքդ լույսը*, որ մաղթում են հարսանիքի, հաջող ծննդաբերության և այլ առիթներով ու նշանակում է՝* քեզ ուրախություն եմ ցանկանում*: Մաղթանքը ստացողն էլ պատասխանում է՝* լու-

---

[66] З. Х а р а т я н. Культовые мотивы семейных обычаев у армян.— *«Հայ ազգագրություն և բանահյուսություն» (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 17, Երևան, 1989, էջ 41:*

[67] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 60:*

[68] *Վ. Տ է ր - Մ ի ն ա ս յ ա ն. Անգիր դպրություն և առակք, հ. Ա, Կ. Պոլիս, 1893, էջ ՀԱ:*

[69] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Մուշ- Տարօն.– ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1917, էջ 165:*

[70] *Ա. Ք ի ր ա զ յ ա ն. Ռոտոսթոյի հարսանեկան սովորույթներ «Բյուրակն», Կ. Պոլիս, 1899, էջ 166:*

[71] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 50:*

սի կենաս, *այսինքն՝ «լույսի, ուրախության մեջ լինես»*[72]*: Մոմեր են դրվում նաև հարսանեկան* ծառի *վրա: Թագավորն ու թագուհին եկեղեցի գնալիս շրջապատվում էին մակարների օղակով, որոնք նրանց առջևից տանում էին վառվող մոմերով* ծառը[73] *ու ջահերը: Հարսանեկան ծիսակատարությունը եզրափակվում է* մոմերով պարով (չրաղվան)*: Բոլոր մասնակիցները մեկական վառվող մոմ պահած, ձկույթներով միմյանց ձեռք բռնած, քավորի ղեկավարությամբ շրջանաձև շարժվելով դանդաղ պարում են*[74]*: Մ. Լուլեճյանի գրանցած հարսանյաց երգերի ու եղանակների շարքում կան «Մոմ խաղցնելու եղանակներ», որոնք Անիից Ղրիմ են գնացել, հետո՝ Նոր Նախիջևան*[75]*:*

Ընդհանրապես, հարսանիքի կրակները, ինչպես Տեառնընդառաջինը, ոչ միայն պտղաբերություն էին ապահովում, այլև չար ոգիներին էին հեռացնում: Երբ թագավորի մայրը կրակն ու խունկը դուրս էր հանում տնից և դռան շեմքում պտտում նորապսակների շուրջը, նա վանում էր չար ոգիներին առհասարակ, որպեսզի դրանք չվնասեին նորապսակների բախտին և, մասնավորապես, հարսի տան բոլոր ոգիներին, որոնք կարող էին ներխուժել աղջկա տնից տղայի տուն և սրբապղծել նորափեսայի ընտանեկան պաշտամունքը, տնային ոգիներին ու սրբությունները: Խնկարկման ծեսով մայրը նաև սիրաշահում էր բարի ոգիներին, տան պահապան հրեշտակներին, որոնք դրա շնորհիվ ավելի ևս - պետք է պաշտպանեին նորապսակներին չարերի հալածանքներից, աներևույթ խավար ուժերի վտանգից[76]*: Անգամ բառի մակարդակով է լույսը վանում չար ոգիներին, ինչպես երեկոյան ասվող «բարի լույսը»:*

Երեխա ծնվելիս *մեծ կարևորություն ունեին օջախը, կրակն ու շիկացած երկաթը, մոխիրը, մոմը: Ծննդաբերությունը հեշտացնելու համար այրում էին* ծաղկավելը *և ծննդկանի վրայով երեք անգամ անցկացնում*[77]*: Ծննդկանին մի քանի անգամ պտտում էին թոնրի շուրջը, հետո մի քիչ կրակ էին վառում նրա մեջ և ծննդկանին կանգնեցնում՝ մի ոտը թոնրի մի կողմը, մյուսը՝ մյուս*[78]*: Որոշ վայրերում հակառակն էր՝ ծննդկանը ծունր էր դնում օջախից հեռու, դռան ետևը, մեղք համարելով մերձենալ օջախին*[79]*, որպեսզի չպղծեր: Ծննդաբերության ծեսում ևս շատ կարևոր էր Տեառնընդառաջի կրակը, որ բացի չար աչքից, փրկում էր չար ոգիներից: Այսպես, եթե երեխան Տեառնընդառաջից մի քանի օր առաջ էր ծնվում, մորը թոցնում էին տոնական խարույկի վրայով և այդպիսով նրան հանում քառասունքից ու պաշտպանում չար ոգիներից*[80]*: Երեխայի ծնվելու ընթացքում տատմայրը շամփուրը շիկացնում էր, ապա ծունր դրած կնոջ*

---

[72] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39*

[73] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Լեռնային Ղարաբաղի հայերը.– ՀԱԲ, հ. 12, Երևան, 1981, էջ 47:*

[74] *Հաղորդել է ազգագրագետ Հասմիկ Հովսեփյանը:*

[75] *Մ. Գ. Լ ո ւ լ ե ճ յ ա ն. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական երգերն ու եղանակները.– ՀԱԲ, № 2, Երևան, 1971, 145–146:*

[76] *Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն. Հայ ընտանեկան պաշտամունքը.– ԱՀ, գ. 14, Թիֆլիս, 1906, էջ 173:*

[77] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 51:*

[78] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Նոր-Բայազետի գավառ, էջ 34:*

[79] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ, ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 251:*

[80] *Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. Հայկական սովորություններ, էջ121:*

շուրջը երեք գիծ էր քաշում և շամփուրով երեք անգամ խաչակնքում, որպեսզի չարը գծից ներս չմտներ: Հետո, երբ ծննդկանին պառկեցնում էին, նույն շամփուրով երեք համակենտրոն շրջան էին գծում, խաչակնքում ու շամփուրը խրում ծննդկանի սնարի մոտ[81]*: Նոր Բայազետում երեխա ծնվելիս ողջ քառասնօրյա շրջանում գիշեր-ցերեկ ճրագ էին վառում և բարձի տակ հրահատ դնում, որպեսզի չարքերը չմոտենային*[82]*: Երեխա ծնվելու ողջ գիշերը կրակարանում չպետք է կրակը հանգչեր, որպեսզի* ալը*, որը սարսափում էր կրակից, չհամարձակվեր մոտենալ ծննդկանին*[83]*: Մոխիրը երեխային պաշտպանում էր չար աչքից՝ սկսած իր ծննդյան պահից. երբ պորտը կտրում էին, մորը պառկեցնում էին անկողնում՝ նախապես տակը մոխիր ածելով, որը երկու օրվա ընթացքում հաճախ փոխում էին: Երրորդ օրը տատմայրը ծննդկանին լողացնում էր, երեխայի հետ պառկեցնում էր նոր անկողնու մեջ, իսկ մոխիրն ու ցնցոտիները բակի դռան շեմքի մոտ էր թողնում, որպեսզի երեխային աչքով չտային*[84]*, քանի որ մոխիրն ընդհանրապես պաշտպանում էր իր վրայով անցնողի չար աչքից: Երեխային չար աչքից փրկելու համար նաև Տեառնընդառաջի մոխրից և ածուխներից էին դնում բարձի տակ*[85]*: Ծննդաբերության ժամանակ մեծ նշանակություն էր տրվում մոմերին և ոչ թե սովորական, այլ այն մոմերն էին վառում, որոնք Ծաղկազարդի երեկոյան* Դոնբացի *հանդիսավոր արարողության ժամանակ են վառում, այնուհետև հանգցնում են ու տուն բերում (մինչև 40 հատ), որպեսզի դժվար ծննդաբերության ժամանակ վառեն*[86] *և երեխայի աշխարհ գալուն նպաստեն:*

Մկրտության ժամանակ ևս շատ կարևոր է կրակը, ավելի ճիշտ՝ գործող թոնիրը, որը կրկին եկեղեցուն էր փոխարինում[87]*: Եկեղեցում կնքելիս էլ, երբ երեխային հանում էին մեռոնից, ջուրը թոնիրն էին լցնում*[88]*: Իսկ այն տեղում, որտեղ որ մայրն ազատվել էր, խոտ էին վառում, «տերնտաս» անում (որն անկախ ժամանակից էր այդպես կոչվում): Այնուհետև ծննդկանը երեխան գիրկը, ձեռքին մոմ բռնած երեք անգամ անցնում էր կրակի վրայով և երեք անգամ պտտվում դրա շուրջը: Այդ կրակի մոխիրը, ինչպես և ծննդաբերության ժամանակ, դնում էին բարձի տակ, որպեսզի երեխան չվախենար, նրան «ցավ չդիպչեր»*[89]*, այսինքն չար ոգիների ազդեցությանը չենթարկվեր: Երեխաներին լողացնելիս անպայման ածուխ էին գցում ջրի մեջ, իսկ գիշերը ով էլ որ լողանար,*

---

[81] Ե. Լ ա լ ա յ ա ն. *Բորչալուի գավառ, էջ 251:*

[82] Ե. Լ ա լ ա յ ա ն. *Նոր-Բայազետի գավառ, էջ 41, 45:*

[83] Г. Ф. Ч у р с и н. *Նշվ. աշխ., էջ 50:*

[84] Ե. Լ ա լ ա յ ա ն. *Վայոց ձոր.– ԱՀ , գ. XIV, Թիֆլիս, 1906, էջ 138–140:*

[85] А. Т. М а р у т я н. Интерьер армянского народного жилища (вторая половина XIX – нач. XX в.).– *ՀԱԲ, հ. 17, էջ 104:*

[86] *Ա ր մ. Հ. Շ ե փ ի կ յ ա ն. Նախապաշարումներ և սովորություններ Ակնա մեջ.– «Բյուրակն», 1900, էջ 647:*

[87] А. Т. М а р у т я н. *Նշվ. աշխ., էջ 87:*

[88] Ե. Լ ա լ ա յ ա ն. *Վարանդա, էջ 115, 148:*

[89] Ե. Լ ա լ ա յ ա ն. *Ջավախք, 1896, էջ 272:*

պետք է ածուխը գցեին ջրի մեջ, որպեսզի «չարքերը փախչեին, չխփեին»[90]: Մոմերի առիթով հիշատակենք Կոռնեյ Լը Բրյուինի «Ուղեգրության» մեջ նկարագրվող հայ երեխայի մկրտությունը Նոր Ջուղայում XVII դ. սկզբին. «Եկեղեցում մկրտության արարողությունն ավարտելուց հետո թափորը, որի առջևից մեծ խաչ են տանում, իսկ մասնակիցների ձեռքին մոմեր կան, քահանաների երգեցողությամբ շարժվում էր դեպի նորածնի տուն»[91]: Ընդհանրապես մոմերը վառվում են այս ծեսի ողջ ընթացքում, հետո մեռոնը հանելու արարողության ժամանակ, այնուհետև դառնում են բարեբեր պահպանակներ ու պահվում մինչև մկրտվողի հարսանիքը:

Երեխաներին չար աչքից պաշտպանելու և դրա ազդեցությունից ազատելու ամենատարածված միջոցներից է չար աչք ունեցողի մազը կամ նրա որևէ իրի մասնիկը վառելը և երեխայի մոտ աղոթքների ուղեկցությամբ ծխեցնելը: Սևանի ավազանում, օրինակ, երբ իմանում են, թե ով է երեխային աչքով տվել, նրա հագուստից մի կտոր թաքուն կտրում են և վառում օրորոցի մոտ[92]: Այս գործողությունը երբեմն բացեիբաց է կատարվում, քանի որ կան մարդիկ, որոնք չեն ժխտում իրենց չար աչք ունենալը և իրենք են հագուստից մի կտոր կտրում տալիս: Ակնում աչքով տվողի տան շեմից փայտի կտոր էին տաշում և այրում էին աչքից տուժածի տանը, որպեսզի նրա գլխացավն անցներ[93]: Երբ մուսալեռցիները կասկածում էին, որ մեկը երեխային աչքով է տվել, նրա տան շրջակայքից և գյուղի խաչմերուկի կենտրոնից խռիվներ էին հավաքում, վառում ու ծխի վրա մանկանը պտտեցնելով ասում. «Չար աչքը թող ելլէ, չար շունչը թող չորնայ» ու նաև աչքով տվողի իրերից մի բան այրում, ծխեցնում էին երեխայի մոտ[94]:

Չար աչքից երեխաներին պաշտպանելու համար Լոռիում մոխիրը, խոզի մազը, կոտրած ասեղը փոքր տոպրակի մեջ էին դնում և կախում երեխայի վզից[95]: Իսկ աչքից հիվանդացածին հետևյալ կերպ են բուժում. անպայման մի անդրանիկ զավակ գավաթով ջուր է դնում հիվանդի գլխավերևը, յոթ հատիկ կրակ է գցում մեջը, աղոթք ասելով մի մասը քիչ-քիչ խմեցնում է և մնացածը թափում[96]:

Կրակն օգնության է գալիս, երբ հարկ է լինում գուշակելու, թե ով է աչքով տվել և բուժումն էլ կրակով է կատարվում. Վասպուրականում օրորոցում պառկած երեխայի վրա խաչաձև բամբակով մի ափսե էին դնում, խաչի թևերի միջև աղ էին ածում՝ տալով նրանց անունները, ովքեր կարող էին աչքով տված լինել և վառում էին խաչի թևերն ու հետևում՝ ո՛ր աղի մոտ վերջին բոցը հանգչեր, այդ

---

[90] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վարանդա, էջ 194: Ե. Լ ա լ ա յ ա ն. Գանձակի գավառ.– ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 333*

[91] *Է. Թ ա ճ ի ր յ ա ն. Կոռնեյ Լը Բրյուինի «Ուղեգրությունը» որպես հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրման աղբյուր.– «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», Երևան, 1996, էջ 138:*

[92] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 8:*

[93] *Յ. Ճ ա ն ի կ ե ա ն. Հնություններ Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 160:*

[94] *«Հուշամատյան Մուսա լեռան, Բեյրութ, 1970, էջ 171:*

[95] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ, ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 237:*

[96] *Հ. Ճ ա ն ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 160:*

անձն էր աչքով տվել: Ուստի, գիշերը գաղտնի գնում էին այդ մարդու տան դռնից մի փոքր տաշում և բերում, երեխայի օրորոցի տակ վառում էին ու շշնջում՝ «Չար աչք, չար փուշ / Չար կրակն իջե իրիցի, / Չարերն սարերն երթան, / Բարին վըր մեր տղի օրորոցին»[97]: Բամբակը բուժման ծեսում գուցեն պատահական չէ, քանզի ըստ ավանդության, Աստված մարդուն կավից շինելուց հետո կավոտ ձեռքերն իրար քսեց և կավի մնացորդները Երկիր թափվեցին, ու դրանցից բուսնեց բամբակը[98]: Այն կապվում է կայծակի հետ, որը նաև բուժող է. ավանդությունում ասվում է. «Մի բամբակի պառավ, նստած մի բամբակի ձիու վրա, ձեռքին մի բամբակի մտրակ քշում է երկնքով: Նրա ձիու ոտների տրոփյունից առաջանում է որոտը»[99], իսկ որոտից անբաժան է կայծակը[100]:

Երբ չար աչքով մարդը մեկնումեկի տուն է գնում և այնտեղից արդեն դուրս գալիս է լինում, տնեցիներն օջախի մոխրից վերցնում և նրա հետևից փչելով ասում են՝ «Քու չար աչքը քի հետ տար», որպեսզի եթե արդեն հասցրել է աչքով տալ, ազդեցությունն անցնի[101]: Դրսից եկող մարդկանց չարությունը չեզոքացնելու համար Նոր տարվա նախօրեին «ապլաները մոխիր են ածում դրսի դռան շեմքին (ինչպես ծննդկանի շեմքին), որպեսզի չար մտքով ներս մտնողները էշ կտրեն*»[102]: Չար աչքի ազդեցությունն անցկացնում էին նաև* գոլորշով *ու* ածխով*: Համշենահայերը ամանով ջրի մեջ այրվող ածուխներ էին գցում, գոլորշին «տալիս էին ակնռածին», որպեսզի կուլ տար: Ջրից մի քանի կում խմեցնում, մի քիչ էլ սրտին էին քսում: Մնացածը լցնում էին օջախի չորս անկյունները, և հանգած ածուխները մոխրաթաղ անում: Կամ մի ասան շուռ էին տալիս, այրվող ածուխ դնում վրան և թողնում էին, որպեսզի ինքն իրեն մարեր, դառնար մոխիր ու դրա հետ չար աչքն անցներ[103]: Ածուխը նաև չար ոգիներին է քշում և փրկում կախարդությունից: Այն շատ կարևոր պահպանակ էր հատկապես երեխաներին գիշերը տնից դուրս տանելիս: Պատկերացվում էր, որ չար ոգիները գիշերը տնից դուրս եկող մարդու հետևից էին ընկնում և տուն վերադառնալիս ջանում էին նրա հետ ներխուժել տուն: Այդ պատճառով տուն դառնալիս մարդիկ միանգամից ներս չէին մտնում, սպասում էին, որ տնեցիները ոտքերի առաջ ածուխ գցեին, հետո ներս մտնեին, այլապես չար ոգիներից չէին ազատվի: Գիշերը ջուր*

---

[97] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրականի ազգագրությունը.– ԱՀ, գ. XX, Թիֆլիս, № 2, 1910, էջ 183:*

[98] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վարանդա, էջ 203:*

[99] *Նույն տեղում, էջ 220:*

[100] *Բամբակն ու կրակը որպես մանկանը չարքերից պաշտպանող հմայական պահպանակներ են հանդես գալիս նաև տաջիկների սովորույթներում: Չօգտագործված նոր օրորոցի մեջ երեխային վնասող ոգիներ են լինում: Դրանց վերացնելու նպատակով տատմայրը* ալաս *է կատարում՝ փայտի վրա լաթեր է կապում, թաթախում է յուղի մեջ, վառում է և երեք անգամ պտտեցնում օրորոցի շուրջը: Այնուհետև օրորոցի մեջ բամբակ են այրում, որպեսզի* փարի *չար ոգիները վախենան կրակից ու փախչեն. տե՛ս* О. А. С у х а р е в а. Мать и ребенок у таджиков.– АН СССР, Иран, III, Л., 1929, с. 145.

[101] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ, էջ 237:*

[102] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք, ԱՀ, գ. Բ, № 2, 1897, 247:*

[103] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն ց. Համշենցի հայեր.– ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 116–117:*

բերելիս, անմիջապես մի քիչ լցնում էին վառարանը, որպեսզի նրա հետ չար ոգին վերանար վառարանում[104]*:*

Մուրը ևս հմայական պահպանակ է: Այն պաշտպանում է չար ոգիներից ու չար աչքից: Օրինակ՝ հնդիկները երեխաներին չար աչքից պաշտպանելու համար մուր էին քսում նրանց այտերին ու ճակատին[105]*: Երեսին մուր քսելու երևույթը քաջ ծանոթ է հեքիաթներից:*

Կրակով չար աչքից են պաշտպանում նաև կենդանիներին: Օրինակ՝ երբ նորածին հորթուկ ունեցող տնից երեկոյան որևէ մեկին թան տալու հարկ էր լինում, մեջը այրած հաց կամ ածխի կտոր էին գցում, որպեսզի հորթուկին չար աչք չդիպչեր[106]*: Շերամի որդերին* նազարից *փրկելու համար ջրի մեջ ածխի կտորներ են գցում, կասկածելի 7 մարդու անուն են ասում, ջրի մի մասը ցանում են ոտքերի տակ, մյուսը՝ որդերի վրա: Երբ որդերի մոտ օտար մարդ է գալիս, նրա գնալուց հետո նույն ջրից կրկին լցնում են որդերի վրա: Նաև աղն ու մոխիրը խառնում են, պտտեցնում են որդերի վրա և լցնում կրակի մեջ, որպեսզի «չար աչքը կուրանա»*[107]*: Հարքում երիտասարդները գոմեշների պոչերը խանձում էին, որպեզի նրանք* չաչքռեին[108]*: Համշենահայերը կովին չար աչքից պաշտպանելու համար ածուխը, սխտորի պճեղը, վայրի խնձորենու փայտի մասնիկը, կծու տաքդեղը, շան աղբը, հավի ծերտը լցնում են մի կտորի մեջ, կարում են և կապում նրա եղջյուրներին*[109]*:*

Բուժման և հիվանդությունների կանխարգելման *նպատակով ևս կրակը նշանակալի դեր ուներ: Ինչպես նշվեց, ծնվելու պահից կրակն ու ծուխը օգնության են եկել մորն ու մանկանը: Այսպես, ընկերքն ուշանալու դեպքում ծծումբ էին գցում կրակի մեջ և ծննդկանին վրան կանգնեցնում, որպեսզի կրակից ծխահարվելով շուտ ընկներ: Իսկ երբ նորածինը ուշաթափվում էր, ընկերքը գցում էին կրակի մեջ, հավատալով, որ երեխայի հոգին ընկերքի մեջ էր մտել և կրակից նեղվելով, կարող էր երեխային վերադառնալ*[110]*: Երբ որևէ մեկն ընկնում էր, մարմինը ցավեցնում, տնեցիներն ընկած տեղը փորում էին և եթե մի ածխի կտոր էին գտնում, տուն էին բերում, ջրի մեջ գցում և խմեցնում նրան*[111]*: Հիվանդություններից ազատող մոգական ուժ ունի Տեառնընդառաջի կրակը, որի վրայով թռչողների «ցավն ու չոռը թափվում են կրակի մեջ»: Էջմիածնի գյուղերում հավատում էին, որ բոլորը պետք է* տրնդեզի *կրակով իրենց շորերը երեք տեղ ծակեն, քանի որ այդ ծակերը թալիսմաններ են և ողջ տարի պաշտպանում են հիվանդություններից*[112]*: Ջավախքում Տեառնընդառաջի խարույկի շուրջը պտտ-*

---

[104] И. С т е п а н о в. *Նշվ. աշխ., էջ 82:*

[105] М. С и н г х. Угнетенные касты Индии, М., 1953, с. 169.

[106] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 116–117:*

[107] *Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Շերամապահությունը Հայաստանում.– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1977, էջ 153:*

[108] *Բ ե ն ս է. նշվ. աշխ., էջ 59:*

[109] *ԴԱՆ, Սուխումի, 1976, № 2, էջ 7, 19:*

[110] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրականի ազգագրությունը, էջ 168:*

[111] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 152:*

[112] *ԴԱՆ, Հոկտեմբերյան, Էջմիածին, Աշտարակ, 1973, էջ 30:*

վելով և վրայով թռչկոտելով ասում էին՝ «Ո՛չ քորոտիմ, ո՛չ բորոտիմ»[113]*: Այս տոնի ժամանակ հիվանդներին երդիկով հանում էին կտուրը՝ կրակի մոտ*[114]*: Հարկ է նշել, որ երդիկով հանելու հմայությունը խիստ կարևոր էր և առանց դրա արդյունքը լիարժեք չէր լինի: Ջավախքում հոգեկան հիվանդին բուժելու նպատակով ևս խարույկն էր օգնության գալիս. ըստ մեր գրի առած նյութերի, 1950-ական թվականներին հիվանդին բուժելու համար թուրք մոլլա էին հրավիրել: Նա պարտեզի կենտրոնում կրակ էր վառել, մի ձեռքով հիվանդի ձեռքից բռնած պտտեցրել էր կրակի շուրջը, մյուս ձեռքով շղթան անընդհատ հարվածելով գետնին՝ չարքերին փախցնելով բուժել էր*[115]*: Սասունում* Տերընդեզի *կրակի մոխիրը հազի դեղ էր՝ կուլ էին տալիս*[116]*: Սալմաստում այս խարույկի կրակով խանձում էին երեխաների մազերը, որպեսզի գլուխը չցավեր*[117]*: Ռոդոսթոյի հայերը եկեղեցում սրբերի պատկերների առջև 40 մոմ էին վառում, որպեսզի ծանր հիվանդն ապաքինվեր: Այստեղ նաև չորս տնից ալյուր, յուղ, բամբակ վերցնելով, պատրույգ էին սարքում, չորս ճամփաների մեջտեղը դնում, որպեսզի անցորդները հիվանդի համար «բժշկվի» ասեին»*[118]*:*

Ակնեցիները երեխաների փորացավը (խոթություն) *դարմանելու համար «կաթսայի ներքևի սևը քերելով՝ ջրով քիչ մը կը մարեն և կը խմեցնեն»*[119]*: Երեխայի* ծաղիկ *և* կարմրուկ *հիվանդանալիս, ձեթի ճրագը և մոմերը վառած էին պահում մինչև նա բուժվեր: Կրակը* ծաղկամոր *համար է՝ «Ծաղիկ հիվանդության հայտնված օրվա երեկոյան դռան ետևը մեղրամոմ են վառում «ծաղկամոր սիրուն»*[120]*: Մոմերը հիվանդության բուժման պարագայում տարբեր ձևերով են ի հայտ գալիս: Մոմով գուշակությամբ նախ հայտնաբերում են ախտի պատճառը: Օրինակ՝ Շիրակում երեխային* կոխից *բուժելիս եկեղեցու մոմը հալեցնում, լցնում են ջրի մեջ և ստացված ձևով գուշակում են* կոխի *պատճառը, այնուհետև բուժում են՝ այդ մոմը երեք անգամ լողացնելիս ջրի մեջ գցելով*[121]*: Լոռիում* կոխված *երեխային բուժելու համար 7 տնից են մոմ հավաքում և նույն կերպ բուժում*[122]*: Լուսնից չհիվանդանալու համար կարևոր են մուրն ու մոխիրը: Որպեսզի երեխան «չծռվի, չթուլանա, չգժվի լուսնի նորից, նորը վրեն չծանդրանա ու չհիվանդացնի», Պտղնիում նրա աջ ձեռքին ու ձախ ոտին պղնձի տակի մրով ապարանջանի նման օղ են գծում և մի հատող ուղղահայաց՝ գիծ, որ դառնում է խաչի նման*[123]*: Իսկ Թալինում, երբ երեխան* նորենց *է լինում, բուժելիս կավե*

---

[113] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք, 1897, էջ 263:*

[114] *Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 122:*

[115] *ԴԱՆ, Ախալքալաք, Ախալցխա, 1978, էջ 12:*

[116] *Վ. Պ ե տ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 333:*

[117] *Ա. Ա թ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 174:*

[118] *Ս. Հ ո հ ա ն ն է ս յ ա ն. Ռոտոսթոյի կիներու կրոնական սովորություններն և նախապաշարումները.– «Բյուրակն», 1899, էջ 348:*

[119] *Հ. Ճ ա ն ի կ յ ա ն. նշվ. աշխ. էջ 162:*

[120] *Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 217:*

[121] *ԴԱՆ, Լենինական, 1973, էջ 2:*

[122] *ԴԱՆ, Լոռի, 1972, 123:*

[123] *ԴԱՆ, Պտղնի, 1976, էջ 4:*

պտուկի տակի մուրը խաչաձև քսում են այտերին, ճակատին, դնչին[124]*: Սևանի ավազանում, երբ լուսինը նվազելիս երեխան հիվանդանում է, պղնձե կաթսայի մուրը խաչաձև քսում են ճակատին ու ափերի մեջ, և երբ «օրն անցնում է», լվանում են*[125]*: Շիրակում նույն նպատակով Տեառնընդառաջի կրակի մոխիրն են ջրով խառնում և քսում ճակատին*[126]*: Արտաշատում ևս* նորենց չառնելու *համար նորապսակներն այրում էին իրենց հագուստների ծայրերը (չնայած դա արվում էր առաջին հերթին պտղաբերության նպատակով): Համշենահայերը որպես դեղ էին պահում Տեառնընդառաջին քահանայի ձեռքով վառած և աղոթած կրակի մոխիրը ու ապաքինման համար քսում մարմնի ցավող անդամին*[127]*: Նոր Բայազետում վախեցած երեխային բժշկելու համար բամբակ վառելով էին գուշակություն անում (ինչպես չար աչքից տուժելիս). օրորոցի կամարի, երեխայի գլխի, սրտի և ոտների վրա խաչաձև բամբակ էին դնում, որոշ ժամանակ անց հավաքում էին և վառում: Եթե ամբողջը միանգամից էր վառվում, նշանակում էր, որ վախը շուտով կանցներ: Եթե լրիվ չէր այրվում՝ վախն ամբողջովին չէր անցնելու և նույնը երեք անգամ կրկնում էին*[128]*: Սասունցիները մարմնի ցավերը (հատկապես փորի ու մեջքի) բուժում էին շիկացած ակիշի թաթով. ցավող տեղերն այրում էին ոչ թե թաթի լայնությամբ, այլ կողքի հաստությամբ, որով ակիշի թաթի մի հատվածը մարմնի մաշկի վրա թողնում էր 2–3 սմ երկարության և կեսից քառորդ սմ լայնությամբ այրվածքներ՝ 15–20-ից մինչև 35–40 հատ: Փորի կտրող ցավերի ժամանակ կրծոսկրից մինչև պորտը, աջից դեպի ձախ էին դադրում: Եթե մարմնի որևէ մասն ուռչում էր կամ թարախապալար էր առաջանում, պայթեցնում էին շիկացրած հերյունով: Մարմինը կրակով այրելով բուժում էին մալարիան, սրտի ցավերը: Վերքի վրա կայծքարով կայծեր թափելով բուժում էին* մրջնաբուն *կամ* էրեթիկ, ջրջրուկ *կոչվող մաշկային հիվանդությունները*[129]*: Բուժող ու կանխարգելող հատկություններ են վերագրվում նաև օջախներին: Նախ՝ երեխան ծնվելուն պես պորտը կտրում էին ու գցում թոնրի* սուրբ *ու* մաքուր *ակը՝ պաշտպանելով երեխային հիվանդություններից*[130]*: Գանձակի Փիփ գյուղում Նահատակենց օջախը, որ կիսավեր տան սովորական կրակարան էր,* մկնատամ *էր բուժում: Այստեղ մոմ էին վառում, հողից վերցնում, շաղախում էին ջրով ու քսում մաշկին՝* մկնատամի *վրա*[131]*: Երեխայի բերանից ջուր գնալիս, մայրը նրան գրկած, լուռ գնում էր մի այնպիսի տուն, ուր այդ երեխայի հետ չէր եղել և թոնրի ական շորով երեք անգամ սրբում էր նրա բերանը*[132]*:*

---

[124] *ԴԱՆ,1977, Թալին, էջ 56:*

[125] *ԴԱՆ, Կամո, Մարտունի, 1982, էջ 8:*

[126] *ԴԱՆ, Քեթի, Ախուրյանի շրջ., 1974, էջ 2: Սևանի ավազանում նույն մոխիրը կրկին խաչաձև քսում են նաև նորահարսի ու նորափեսայի ճակատներին ու ափերի մեջ, որպեսզի երջանկություն բերի և պաշտպանի չարից:*

[127] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 157:*

[128] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Նոր-Բայազետի գավառ, 1907, էջ 45:*

[129] *Վ. Պ ե տ ռ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 336:*

[130] *ԴԱՆ, Սիսիան, 1974, էջ 39:*

[131] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Գանձակի գավառ, 1900, էջ 334:*

[132] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 52:*

Կախարդության դեմ *կրակը հիշատակվում է դեռևս խեթական աղբյուրներում* կախարդությունը վնասազերծելու ծեսում, *որի ժամանակ կրակ վառելու արարողություն էր կատարվում: Իմիջիայլոց, նույնպիսի ծես էր կատարվում նաև ընտանեկան վեճերի դեմն առնելու համար: Խիստ ուշագրավ է, որ կախարդությունը պատժող խեթական օրենքներում հատուկ շեշտվում է, որ կրակի հետ կապված կախարդանքը դատապարտվում է*[133]*:*

Կախարդներից կրակով պաշտպանվելը բազմաթիվ ժողովուրդների հավատալիքներում է տարածված: Իսկ Եվրոպայում այն գագաթնակետին հասավ հրադատության ձևով, երբ դատապարտված վհուկներին, որոնք բոլոր դժբախտությունների պատճառն էին, հրապարակայնորեն ողջակիզում էին խարույկի վրա[134]*: Ոչ միայն խարույկների ու ջահերի կրակներն էին զենքի դեր կատարում վհուկների դեմ, այլև օդ նետվող վառվող սկավառակները, բլուրներից ցած գլորվող այրվող անիվները, որովհետև վհուկներն անտեսանելիորեն ճախրում են օդում և աննկատ թափառում դաշտերում, այգիներում, բլուրների լանջերին*[135]*:*

Վնասատուների դեմ *էին պայքարում կրակով. «Երբ տերնտազը հանգչում է, կանայք մոխրից տանում՝ կճուճների վրա են ածում, որպեսզի* բարաքյաթն *ավելանա, տան երդիկից ներս էին շաղ տալիս, ասելով՝ «Կատուն ներսը / Մուկը դուրսը», որպեսզի մկները ջարդվեն»*[136]*: Մարտի մեկին հարևանները միմյանց դռան շեմին գիշերը գաղտնի մոխիր էին ցանում, որպեսզի ամռանը տներում լու չլիներ*[137]*: Տեառնընդառաջին, երբ քահանան կարդում է Ավետարանի այն տեղը, ուր Սիմոն ծերունին Մարիամին ասում է. «և քո իսկ անձն անցցէ սուր», յուրաքանչյուր ոք դանակով ծածկաբար կտրում է մոմի մի կտոր և պահում, որպեսզի օձը չկծի: Նույնպիսի դեր ունի այդ օրվա դեզի կրակը, որով հագուստների տարբեր մասերը և խոնջանի ծայրն էին այրում բոլորը՝ հարս, աղջիկ, կին, տղամարդ, երեխա»*[138]*: Հարքում խոնջանի և հուճիկի ծայրերը հատուկ այրում էին, որպեսզի ոչ միայն թունավոր օձերը, այլև գայլերը չմոտենային իրենց*[139]*: Շիրակում ասվում է, որ եթե խարույկի վրայով թռչելիս վարտիքը խանձվի, օձը չի կծի*[140]*: Այսպիսով, կրակը միջատներից, սողուններից, գազաններից պաշտպանում է ինչպես իրական, այնպես էլ հմայական միջոցներով:*

Ժողովրդական հավատալիքներում ճրագի լույսն այնքան զորեղ մոգական ուժ ունի, որ նույնիսկ վիշապը նրան չի դիմանում: Վիշապները, որ հաճախ օձերի կերպարանքով են երևում, հայտնվում են ջրհորում: Մարդիկ ճրագով իջ-

---

[133] В. В. И в а н о в. *Նշվ. աշխ., էջ 226:*

[134] T h. G. A y l e s w o r t h. Servants of the Devil, Massachusetts, 1970, p. 89.

[135] Д ж. Д ж. Ф р э з е р. Золотая ветвь, вып. IV, М.–Л., 1928, с. 176-177.

[136] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք, 1897, էջ 264:*

[137] *Տ. Հ մ ա յ ք. Սովորություններ և նախապաշարումներ Էֆքերեի մեջ.– «Բյուրակն», 1899, էջ 723:*

[138] *Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 122:*

[139] *Բ ե ն ս ե. նշվ. աշխ., էջ 59:*

[140] *ԴԱՆ, Հառիճ, 1986, էջ 12:*

նում են նրանց բռնելու, որովհետև «եթե օձը ճրագ տեսնի, այլևս մարդուն վնասել չի կարող»[141]*:*

Կրակը բնության վտանգավոր երևույթներից՝ *կայծակից, կարկուտից, երաշտից ու նաև հրդեհից պաշտպանող հմայական պահպանակ է: Կայծակից պաշտպանվելու համար Տեառնընդառաջին եկեղեցու ջահից կպցրած մոմից կաթեցնում էին գլխարկի մեջ, որպեսզի կայծակը չխփեր*[142]*: Արևմտյան Հայաստանում, անկախ տոնից, եկեղեցու մոմից գլխարկի վրա երեք տեղ փակցնելով, մարդ ազատվում էր կայծակից*[143]*: Կարկուտը կտրելու նպատակով Տեառնընդառաջից պահած մոմն են վառում*[144]*: Երբ այն չէր դադարում, Սուրբ Սարգսի տոնից պահած փոխինդը խառնում էին Տեառնընդառաջին վառած խարույկի մոխրի ու աղի հետ և շաղ էին տալիս՝ նետելով դեպի վեր*[145]*: Սա պետք է որ եռակի ուժով ազդեր՝ երկու տոների և աղի մոգական զորությամբ: Նոր տարուց մինչև Սուրբ Ծննդյան օրը վառված* տարեմուտի քյոթուկի *խանձողներով էլ էին կարկուտը կտրում՝ դուրս էին նետում, որպեսզի երկինքը խաղաղվեր*[146]*: Ֆրանսիացիները Սբ. Հովհաննեսի խարույկների ածուխով տները պաշտպանում էին կայծակից, հրդեհից, փլուզումից: Սլավոնական ժողովուրդները* աղետի կրակներ *էին վառում վհուկներին այրելու, սատակներին, այլ չար ոգիներին վախեցնելու և փախցնելու համար: Եվ քանի որ կայծակն ու կարկուտը մյուս չարիքների նման վհուկների գործունեության արդյունք էին համարվում, կրակը կայծակից ու կարկուտից էլ էր պաշտպանում*[147]*: Հայերը երաշտի ժամանակ անձրև բերելու համար նորից Տեառնընդառաջից պահած մոմն էին վառում*[148]*:*

Մահվանից հետո *հուղարկավորության ծեսի ժամանակ և դրանից հետո կրակը նույնքան անհրաժեշտ էր, որքան մարդկանց կենսագործունեության ընթացքում: Վարանդայում ննջեցյալին լողացնելուց հետո ձեռքը մոմ էին դնում, որպեսզի մյուս աշխարհում իր բարեկամներին լույսով տեսներ: Նրան լողացնելու տեղում ութ օր շարունակ մոմեր ու կանթեղներ էին վառում, որպեսզի հոգու ճանապարհը դեպի երկինք լուսավոր լիներ: Եվ ցավակցողներն առաջին հերթին ասում էին. «Աստված հոգին լուսավորի»*[149]*: Վասպուրականում ննջեցյալին տնից տանելուց հետո գիշերը չէին քնում այն սենյակում, որտեղ նա մահացել էր և մինչև լույս ճրագ էին վառում: Գյուղերում ազգականներն ու բարեկամները մեկական ձիթաճրագ էին ուղարկում այդ սենյակում վառելու համար և երբեմն 40–80 ճրագ էր վառվում մինչև լույս*[150]*: Գանձակում թաղման կարգը*

---

[141] *Մ. Խ ո ս տ ի կ յ ա ն. Ազգագրական նյութեր Եզնիկի «Եղծ աղանդոց»-ի մեջ.– ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1917, էջ 143:*

[142] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք, 1897, էջ 263:*

[143] *Ի. Խ. Ա ր ս լ ա ն. Նախապաշարումներ, ավանդություններ և սովորություններ Մունճուսուն գյուղի.– «Բյուրակն», 1899, էջ 487:*

[144] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք, 1897, էջ 263:*

[145] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ, էջ 203:*

[146] *Նույն տեղում, էջ 250:*

[147] Դ ж. Դ ж. Ֆ р э з е р. *Նշվ. աշխ., էջ 146–147, 157, 176:*

[148] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Ջավախք, էջ 263:*

[149] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վարանդա, էջ 179:*

[150] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, էջ 50:*

վերջացնելուց հետո բոլորը գնում էին ննջեցյալի տուն և հյուրասիրվում: Ուտելուց հետո բոլորը ոտքի էին կանգնում ողորմաթաս *խմելու: Նախ քահանան, ապա մյուսները ավագության կարգով վերցնում էին վառվող մոմը և «Աստված ողորմի, ինչ պատարագում հիշվել ա» ասելով՝ մի բաժակ գինի էին խմում: Մոմն ու բաժակն անցնում էին ձեռքից ձեռք: Երբ ննջեցյալը կին էր լինում, մոմի փոխարեն խնձոր էին վերցնում ձեռքը: Այս համատեքստում, եթե խնձորը կնոջ խորհրդանիշն էր, ապա մոմը՝ տղամարդու: Ընդգծվում էր նաև, որ «ողորմաթասը ճրագով են խմում, որպեսզի հոգին լուսավորվի»: Բանանց և մի քանի այլ գյուղերում, թաղման օրը գերեզմանի վրա կրակ էին վառում «որպեսզի ննջեցյալի հոգին այն աշխարհում կրակի պես իր շուրջը լույս սփռի»*[151]*: Ներկայումս էլ մարդու մահից հետո 7 օր գիշերները լույսը վառած են պահում հոգու համար:*

Հանգուցյալի համար մոմեր, կրակ վառելը, խունկ ծխեցնելը ոչ միայն նրա մահվանից հետո որոշակի օրերի է կատարվում (հուղարկավորության և դրա հաջորդ օրը, մահվան յոթերորդ, քառասուներորդ օրերը, տարելիցին, յոթ կամ քառասուն օր շարունակ գիշերները), այլև կապվում է տոների հետ: Այս տեսանկյունից արժանահիշատակ է Լը Բրյուինի հաղորդումը (1704 թ. օգոստոսի 26-ին) Նոր Ջուղայում կատարվող Սուրբ խաչի արարողության մասին. «Օրն սկսվելուց երկու–երեք ժամ առաջ, հայ կանայք գալիս են Նոր Ջուղայի գերեզմանատուն, բերելով մոմեր, փայտ, ածուխ, խունկ: Ապա իրենց ազգականների գերեզմանների կողքին խարույկ են վառում, իսկ գերեզմանների վրա վառվող մոմեր են դնում և կրակի մեջ անընդհատ խունկ լցնում՝ ստեղծելով մեծ բոցավառություն և ողբալով դիմում են իրենց հանգուցյալներին…Դրանք ինձ թվացին հրդեհից ավերված քաղաքի ավերակներ, որոնց մեջ մարդիկ, որոնք փրկվել էին հրդեհից, ողբալով իրենց դժբախտ ճակատագիրը, գիշերային խավարի մեջ ճրագներով եկել էին որոնելու իրենց ազգականներին ու բարեկամներին և գտնելու իրենց ունեցվածքի մնացորդները»[152]*:*

Տարին հինգ անգամ՝ հինգ տաղավար տոներից յուրաքանչյուրի հաջորդ օրը, մեռելոց հիշատակը *նշելու օրն է: Հոգիները դեռ շաբաթ օրը՝ նավակատիքին՝ տոնի նախօրեին երկնքից իջնում են երկիր: Այդ նախօրեին նրանց հիշատակը պետք է նշվի խունկ ու մոմով, որոնք համարվում են հոգիներին մատուցվող զոհաբերություն: Հոգիներին Հայաստանում պաշտում են ամենուրեք նաև ուրիշ տոների նախօրեին և ամեն շաբաթ երեկո: Տանը, սովորաբար, օջախի վրա նրանց համար խունկ են վառում և աղոթում, կամ մի պնակի մեջ կրակ են վառում, վրան խունկ լցնում և շրջում տան բոլոր անկյունները, գոմը, ամենուրեք, ուր կարծում են, թե կենում են* անցելոց *հոգիք: Մի այլ սովորություն է ամբողջ գիշեր* մեռլի ճրագ *վառ պահելը, որպեսզի տան մեռելները կարողանան տուն մտնել: Եթե նրանք տունը խավար տեսնեն՝ երդիկից ներս կթքեն և անիծելով կհեռանան: Մեռելոցին գերեզմաններում են խունկ ծխեցնում՝ ուրախացնելով հանգուցյալների հոգիները, որոնք գերեզմանատանն են գտնվում այդ ժամա-*

---

[151] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Գանձակի գավառ, էջ 326:*

[152] *Է. Թ ա ճ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 140:*

նակ[153]: Կրակի կապը հոգու հետ անհիշելի ժամանակներից է գալիս: Այն առկա է նաև բրոնզեդարյան դամբարաններում, ինչպես, օրինակ, Հառիճում: Այս ժամանակաշրջանին բնորոշ է թաղումը մոխրի և ածխի վրա կատարելը. գերեզմանը նախ կրակով մաքրել են չար ոգիներից, հետո մոխրի վրա դրել ննջեցյալին[154]: Լճաշենի ուշբրոնզեդարյան դամբարաններում ևս հատակները մոխրածածկ են[155]: Այստեղ նաև ձիթաճրագներ և խնկամաններ են դրվել[156] հանգուցյալի հոգու ճանապարհը լուսավորելու համար: Ինչ վերաբերում է դիակիզմանը, պարզ է, որ վերածննդի գաղափարն էր կրում այն:

Մեր օրերում գերեզմաններում կարելի է տեսնել գիշերները մշտապես վառվող էլեկտրական լույս: Հոգու անմահության գաղափարը կապվում է անշեջ կրակի հետ և արտահայտվում է հիշատակի *կրակով: Շատ երկրներում են անհայտ զինվորների հիշատակին անմար կրակներ վառում, ինչպես և Երևանում, որտեղ նաև 1915 թ. հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանի կենտրոնում անշեջ կրակ կա: Իսկ Արագածոտնի Ուջան գյուղում ամեն տարի ապրիլի 24-ի գիշերը սասունցիները սարի լանջին մեքենայի դողերով* 1915 *են գրում և այրում եղեռնի զոհերի հիշատակին: Կրակը, կապված հանգուցյալի հոգու հետ, տարբեր դերակատարումներ ունի, տարբեր գործառույթներ: Ի մի բերելով վերն ասվածը, կարելի է եզրակացնել, որ կրակն օգնում էր հանգուցյալին մյուս աշխարհում տեսնելու իր բարեկամներին, լուսավորում էր հոգին, որպեսզի նա իր շուրջը ևս լույս ստեղի: Խունկն ու մոմը վառելը հաճելի են հոգուն, և նրան նվիրված զոհաբերություն են: Տանը վառվող լույսով հոգին ազատ տուն է մտնում: Կրակը, լույսը հոգուն պաշտպանում են չար ոգիներից ու միաժամանակ մարդիկ՝ իրենք են պաշտպանվում հանգուցյալի հոգուց: Անմար կրակը անմահ հոգին է:*

Գուշակություններ *են կատարվում կրակի միջոցով. դրանք առաջին հերթին կապվում են պտղաբերության, բազմացման, առատության գաղափարների հետ և վերաբերում են հատկապես երկրագործությանն ու զավակ ունենալուն: Տեառնընդառաջի տոնի ժամանակ նայում են, թե որ ուղղությամբ է շարժվում ծիսական խարույկի ծուխը: Նա ուղղվում է այնտեղ, ուր առատ բերք է լինելու: Վայքում Տեառնընդառաջի դեզը վառելու պահին հրացաններ էին արձակում և հետևում էին, թե փախչող շները, որ ուղղությամբ են վազում և այդ կողմից էլ պետք է սպասվեր հողի առատությունը[157]: Այլ տիպի գուշակություններից է հաջողակ լինելու կանխատեսումը. դեկտեմբերի 31-ի գիշերը, երբ Կաղանդի սեղանին մոմեր էին վառում, տան տարեց կինը զննում էր, թե ում ստվերն ինչպես է ընկել պատի վրա՝ ում գլուխը որ երևար, նա այդ տարի մեծ հաջողություն*

---

[153] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 26–28:*

[154] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 95.

[155] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 96.

[156] *Ե. Լ ա լ ա յ ա ն. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 151:*

[157] *Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 122:*

պետք է ունենար, ումը չերևար՝ վնաս կկրեր[158]*: Երբ ճրագը հանկարծակի հանգչում էր, նշան էր, որ մեկնումեկը հանկարծամահ էր լինելու կամ փորձանքի էր հանդիպելու*[159]*: Իմաստության վերաբերյալ կա հետևյալ գուշակությունը. Ավագ շաբաթվա երեքշաբթի օրը «Հիմար և իմաստուն կանանց տոնին տաս տիրացուների մոմ էին բաժանում և դիտում՝ ում մոմը որ շուտ հանգչեր, հիմար էր, ումը ուշ՝ իմաստուն»*[160]*: Մոմեր, բամբակ վառելով գուշակությունները հիշատակվել են հիվանդություններ բուժելու կապակցությամբ:*

Այսպիսով՝ բուն կրակն իր բոցերով, խարույկը, օջախը, խանձողը, ծուխը, մոխիրը, մուրը, ածուխը, շիկացած մետաղը, գոլորշին հմայական պահպանակների դեր են կատարում, պաշտպանելով չար աչքից, չար ոգիներից, սիրաշահում են բարի ոգիներին, կանխարգելում, բուժում են հիվանդությունները, պաշտպանում են բնության արհավիրքներից: Սրանց անհրաժեշտությունն առավել մեծ է տոների ու ծեսերի ժամանակ: Այս հավատալիքների հիմքում, իհարկե, այն գաղափարն է ընկած, որ կրակը երկնային ծագում ունի՝ «կրակը կայծակից է մնացել երկրի վրա»[161]*: Եվ կրակի պաշտամունքն այնքան ամուր է միշտ նստած եղել մարդկանց գիտակցության մեջ, որ եկեղեցին կանոնակարգել է նրա տարրերը՝ մոմ վառելը, խունկ ծխեցնելը, իսկ* հրաշագործ *խարույկներն ամենակարևորն են Տեառնընդառաջի տոնի ժամանակ:*

АРМЯНСКИЕ АМУЛЕТЫ, СВЯЗАННЫЕ С КУЛЬТОМ ОГНЯ

АСТХИК ИСРАЕЛЯН

Р е з ю м е

Отголоски культа огня сохранились в клятвенных формулах, запретах, благословениях, в виде жертвоприношения огня, поклонения очагу и пр. В народных верованиях огонь имеет предохранительную магическую силу. В старину священным обязательством людей считалось сохранение огня в очаге, благодаря которому злые духи не смели входить в дом или храм. Амулетам, связанным с огнем, придавалось особое значение во время праздников и различных ритуалов – Нового года, Сретения, во время свадебного обряда, при рождении ребенка, в течение похоронного обряда и пр. Огонь с пламенем и дымом, костер, очаг, головня, зола, сажа, уголь, раскаленный металл исполняют функции магических оберегов – защищают от сглаза, злых духов, задабривают добрых духов,

---

[158] *Կ. Պ ա ղ յ ա ն. Նախապաշարմունք, գուշակություն, հմայք Կեսարիա և շրջակաները.– «Բյուրակն», 1899, էջ 279:*

[159] *Ե. Լ ա ղ ա յ ա ն. Վասպուրական, էջ 50, Բ ե ն ս ե. նշվ. աշխ., էջ 34:*

[160] *Ե. Լ ա ղ ա յ ա ն. Վասպուրական, էջ 50:*

[161] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 116:*

предупреждают и лечат болезни, защищают от стихийных бедствий, приносят удачу, богатство, плодородие, обеспечивают продолжение рода. Фактически они являются элементами апотропеческой магии в культе огня.

ARMENIAN AMULETS CONNECTED WITH THE CULT OF FIRE

ASTGHIK ISRAYELYAN

S u m m a r y

The traces of fire cult still exist in oath formulae, tabus, blessings, fire sacrifice, hearth worship and so on. In folk beliefs fire has protective magic strength owing to which the evil spirits escape it. Amulets connected with fire are especially important while celebrating festivals and carrying out different rites – on Christmas, Candlemas, at wedding rite, when a child was born, if the child falls ill, at the funeral rite and so on. Thus fire with its flames and smoke, the hearth, the fire brands, ashes, coals and sooth are believed to have the function of charms which defend people and their property from the evil spirits, attract the attention of kind spirits, prevent diseases, disasters and so on. In fact they are the elements of the apotropaic magic in the cult of the fire.